

## ***Ու՞ր էր Մելգոնեանը Ցեղասպանության 90-ամեակի ոգեկոչման ձեռնարկներուն***

Այս տարի Մելգոնեանը չմասնակցեցաւ Ցեղասպանության ոգեկոչման ձեռնարկներուն: Ի՞նչ էր պատճառը: Ըստ «ըսի-ըսաւ»ներուն, Մելգոնեանի Տնօրէնութիւնը արգիլեց իր աշակերտներուն մասնակցութիւնը: Բայց ասիկա ինչպէ՞ս կարելի էր, երբ տարիներէ ի վեր դպրոցը եւ իր աշակերտութիւնը կանոնաւոր կերպով իրենց մասնակցութիւնը բերած են Ապրիլ 24-ի յիշատակի ձեռնարկներուն:

Պատասխանը պարզ է եւ յստակ: Կազմակերպիչ «համագաղութային» ոգեկոչման յանձնախումբին մեծամասնութեան որոշումով Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը չէր հրաւիրուած որովհետեւ Մելգոնեանի մասնակցութիւնը «անմակարդակ» որակաւորում պիտի բերեր հանդիսութեան: Պէտք էր «որակաւոր» բաներ ներկայացնել, եղեր: Եթէ այս էր յանձնախումբին իսկական նպատակը, կրնային պարզապէս «համագաղութային» ոգեկոչման յանձնախումբին անդամներէն ներկայ գտնուիլ Մելգոնեանի «Երգ ու Պար»ի հանդեսին Ապրիլ 8-ին, կամ Ապրիլ 20-ի Ցեղասպանության ոգեկոչման ձեռնարկին:

Եթէ յանձնախումբին անդամները ազնուութիւնը ունենային ներկայ ըլլալու, բեմին վրայ պիտի տեսնէին որակաւոր հանդիսութիւն մը, եւ ոչ թէ ձանձրացուցիչ ճառեր, որոնցմէ շատ լսած ենք:

Ուրեմն, յստակ է որ այս «համագաղութային» յանձնախումբը ուզեց Մելգոնեանը հեռու պահել 90-ամեակի ձեռնարկներէն:

Ինչու՞ սակայն: Չէ՞ որ Ապրիլ 24-ը բոլորիս միասնականութեան խորհրդանիշն է:

Կիպրոսէն ներս, ընդունիք կամ ոչ, Մելգոնեանը եղած է խորհրդանիշը հայութեան: Մելգոնեանն է որ տարիներէ ի վեր հայ երգը ու պարը պահպանած է: Սակայն, այս վերջին խորականութիւնը վտանգաւոր հետեւանքներու հասած է: Արդէն, այս «ըսի ըսաւ»ներուն եւ դիտումնաւոր սուտ տեղեկութիւններուն պատճառով տասնեակ մը տաք գլուխ երիտասարդներ, Ապրիլ 23-ի իրիկունը Մելգոնեան «արշաւեցին» բացատրութիւններ պահանջելով: Մէկ ժամէ աւելի բուռն վեճէ մը եւ բաւական ծանր խօսքերէ ետք, երիտասարդները համոզուեցան կազմակերպիչ յանձնախումբին առած որոշումին՝ Մելգոնեանը հեռու պահելու նպատակով:

90-ամեակի առիթով աշխարհի ամէն կողմ եղանք մէկ սիրտ, մէկ հոգի, բացի Կիպրոսէն: Կայ աւելի կարելոր հարց մը քան թէ Մելգոնեանի «մակարդակը»: Այն ալ այս որոշումը ամնողներուն խղճի խայթը: Այն անձերը որոնք չկրցան Մելգոնեանի հանդէպ երախտապարտ զգալ: Այն անձերը որոնք շահ ունին Մելգոնեանի փակման որոշումէն: Անոնք այսօր փախուստ կու տան իրենց խղճի խայթէն եւ չեն ուզեր նոյնիսկ Մելգոնեան անունը լսել: Սա արդէն ողջ աշխարհը գիտէ:

Անոնք միայն չմոռնան թէ իրենց խղճի խայթը իրենց պիտի հալածէ մինչեւ գերեզման:

Գրիգոր Տէր Պետրոսեան  
«Սրտով Մելգոնեանցի»